

Մոր-Մախիջեան, 4 մարտի

Դարերից ի վեր լուսաւորեալ պետութիւնների առանձին հոգածութեան առարկան է՝ մարդկային կեանքի անձնաս պահպանելը, որովհետև ազգերի և պետութիւնների հարստութիւնը հէնց մարդու մէջ է: Մարդն է աշխարհիս ամենաթանկագին զարդը: Եւ այդ է պատճառը, որ ներկայումս առանձին արժէք ունին գիտութեան այն ճիւղերը, որ պարագում են առողջապահական խնդիրներով: Այդ խնդիրների պարզաբանելն ու լուծելը վերապահուած է զանազան գիտական հաստատութիւններին, իսկ հասարակութեան ինչպէս և ամեն անհատի պարտքն է իրագործել կամ աշխատել իրագործել պարզաբանուած ու լուծուած խնդիրները:

Օրինակ՝ կոյուղու ու ջրմուղի նշանակութիւնը առողջապահական տեսակէտից պարզաբանել են գիտական հաստատութիւնները, իսկ նրանց կեանքի մէջ իրագործելը վերապահուած է ժողովրդին, հասարակութեան:

Այդ երկու առողջապահական ամենազլխաւոր հարցերի իրագործումը վերջնականապէս լուծում է ստացել Նախիջեանի քաղաքային ինքնավարութեան մէջ: Քաղաքը անագին զոհողութիւններ է անում, որ իր բնակչութեան կարողանայ տալ մաքուր ջուր ազատ ֆլասակար միկրոբներէից, և հեռացնել որքան կարելի է շուտ և ամբողջովին այն բոլոր կեղտոտութիւնները, որ կուտակուում են մարդկային բնակութեան տեղերում:

Վերջի, այսինքն կոյուղի անցկացնելու խնդիրը մի քիչ ձգձգում է շնորհիւ այն հանգամանքի, որ քաղաքային գործերի ատեանը համաձայնած չէ Նախիջեանի առանձին բիօլոգիական հայարան ունենալուն և հարցը անցել է Պետերբուրգ Նախարարութեան բժշկական խորհրդին: Պէտք է յուսալ, որ այդ գիտական բարձրագոյն ատեանում մենք խոչնդանների չենք հանդիպի և հարցը դրական լուծում կը ստանայ:

Իսկ ջրմուղի հարցը կախուած է Ս. Պաշ վանքի աղբիւրի ջրի քանակութիւնից: Քաղաքային խնժենք պ. Հէքիմեանի հաշուելով՝ փտորուարի մէջ, ջրի ամենաքիչ ժամանակը, աղբիւրը տալիս է օրական ոչ պակաս քան 190 հազար վեղոր ջուր, որ իհարկէ ժամանակաւորապէս բաւական է մեր քաղաքի համար: Եւ սրով-

հետև հետազօտութիւնները ցոյց են տալիս որ վանքի զանազան աղբիւրների ջրերը միացնելով, կարելի է նոյն իսկ 400 հազար օրական ջուր ստանալ, պէտք է զանք այն համոզման, որ շատ տարիներ շարունակ կարող ենք ապահով լինել ջրի քանակի կողմից: Վանքի ջուրը քաղաք բերելու հարցը դուրսն որոշել էր դեռ անցեալ տարի և արձանագրութիւնը արդէն հաստատուած է պատշաճաւոր իշխանութեան կողմից: Մնում է միայն կազմել մանրամասն նախահաշիւը և որքան կարելի է շուտ իրագործել այդ կարևոր խնդիրը:

Ազգաբնակչութեան առողջապահական բարեկեցութիւնը պահանջում է, որ վանքի ջուրը բերուի քաղաք և որքան շուտ լինի այդ այնքան լաւ:

Գ. Ռ.

ԻՆՉՊԷՍ ՏՕՆԵԼ

Մօտենում է հայ կուլտուրայի մեծ տօնը: Թերթերը օրինակելի համերաշխութեամբ դբողուել են հայկական տպագրութեան 400 ամեակը ըստ արժանւոյն յաւերժացնելու հարցով: Հայկական ազգային ինքնաձայնացութեան և կուլտուրական ինքնուրոյնութեան ամենախոշոր յեարարներից մէկի՝ հայ գրքի, հայ տպագրական խօսքի մեծ տօնը իւր վրայ է ամբացրել հայկական կեանքի կուլտուրական առաջխաղացմանը նախանձախնդիր բոլոր անձնաւորութեանց և հիմնարկութեանց ուշադրութիւնը: Առժամանակ հեռացել են ասպարէզից հայ կեանքի ցաւոտ սխտերը, լսել են առժամանակ մտնրակրկիտ խրճրճանքները, տգեղ եպօլեմիկանները, լսել է հայ կլասիք եսս-ի խոպոտ ձայնը և հայ իրականութեան մաքրած ասպարէզի վրայ մնացել է մեծ յօբելտարը՝ հայ գիրքը:

Հայկական տպագրութեան 400-ամեակը պէտք է դառնայ ազգային տօն, բառիս ամենաբնագրձակ իմաստով: Աւելին կասեմ, հայ գրքի յօբելեանը ոչ միայն զուտ հայկական տօն է, այլ և հանուր կուլտուրական մարդկութեան: Հայը դարերի ընթացքում եղել է Եւրոպական կուլտուրայի և քաղաքակրթութեան յեարարնր և տարածողը Ասիայի կիսավայրենի տարրերի մէջ և ապա՝ Կովկասի խաւարոտ խորքերում: Դարերի ընթացքում հայն է եղել ամենաքաղաքակիրթ

տարրը Փոքր-Ասիայում, նա է և այսօր ամենակուլտուրական յեղը՝ Կովկասի բնիկների մէջ և այդ կուլտուրական մեծ գործծնի զիրը կատարել է հայը ամենից առաջ գրքի, տպագրական խօսքի շնորհիւ: Անհուն մեծ է Գուտտոնբերգի զիւտի նշանակութիւնը բոլոր ազգերի համար, բայց մանաւանդ նշանակալից է նա հայերիս համար, որ դարեր ապրել ենք բարբարոս աշխարհում և լէնդ-թանուրների արիւնոտ սրերի տակից անարատ դուրս ենք բերել և պահում ենք ցայսօր քաղաքակրթութեան և կուլտուրականութեան լուսաւոր շահը:

Հայկական տպագրութեան 400-ամեակը եւրոպական կուլտուրայի տօնն է և հայկական կուլտուրական ինքնուրոյնութեան տօնը միաժամանակ:

Ես չեմ կասկածում, որ հայկական տպագրութեան 400-ամեակը կը տօնուի ըստ արժանւոյն թէ Տաճկաստանում, թէ պարսկահայերի կողմից, թէ Կովկասում և թէ ուրիշ հայաբնակ վայրերում: Բայց մօտից ծանօթ լինելով ուստահայ գաղութների հետ, ես երկիւղ եմ կրում, որ այս մեծ տօնը չգտնի արձագանք ուստահայ գաղութների այլասերեող հայութեան կողմից: Ընդհանուր հայութեան կեանքից ցաւալիօրէն խղուռած, օտարացման ուղին տարիներից ի վեր բռնած գաղութներին խթան է հարկաւոր զարթեցնելու նրանց դարաւոր լէտարգիայից, զի կոչնակ է հարկաւոր հրաւիրելու նրանց՝ միանալ համայն հայութեան բերկրալի տօնախմբութեանը: Եւ այդ խթանը պէտք է ձեռք առնեն այդ գաղութների սակաւաթիւ հայ ինտելիգենտները, այդ կոչնակը պէտք է բարձրաձայն հնչեցնեն գաղութների հայ կեանքի պուխը անցած մարդիկ: Հայ կուլտուրայի վեհագոյն տօնը պէտք է արձագանք գտնէ ամենուրեք, ուր կայ թէկուզ մի բուն հայ համայնք: Հայ գրքի յօրելեանը պէտք է ըստ արժանւոյն տօնուի ամեն տեղ, ուր կայ թէկուզ մի խեղճ ու կրակ հայ դպրոց: Եւ այդ գործը պէտք է ժպտերես ստանձնեն հայ սուսցիկները, հայ քահանաները հայ գաղութների այդ միակ հայ տարրը: Ուժեղ պրօպագանդ, եռանդուն աշխատանք, անդադար գործունէութիւն պէտք է սիսն ուստահայ գաղութների չըայլասեռում տարրերը, բախտի բերմամբ ուստահայ գաղութ ընկած իւրաքանչիւր հայ: Մասնաւորացնելով խօսքս Ղրիմի վրայ, կասեմ Ղրիմի հայաբնակ վայրերի հայ ուսուցիչներ, ուստ-

նողներ, քահանաներ՝ հայ գիրքը, հայ կուլտուրան ձեզանից գործ է սպասում: Դեռ անցեալ ամառ Ղրիմի ուսն թերթերում ես յայտնեցի Ղրիմի հայութեանը, որ մօտենում է վեհագոյն յօրելեանի օրը. նորերս ես դարձեալ յիշեցի ե, թէպէտ շատ եմ յոռետես Ղրիմի հայութեան սգալին-կուլտուրական ինքնաճանաչութեան վերաբերմամբ, սակայն յօրելեանի անհուն մեծութիւնը յոյս է ծնում իմ կրծքին, որ Ղրիմի հայութիւնը կը զարթնի խոր լետարգիական քնից և կը ողջունէ հայ գիրքը, հայ կուլտուրան:

Հայկական տպագրութեան 400-ամեակի օրը, անշուշտ կը կայանան տօնախմբութիւններ, փառաւոր հանդէսներ, երեկոյթներ, ներկայացումներ: Բազուի կուլտուրական միութեան գրական սէկցիայի մշակած ծրագիրը զալիս է հաստատելու իմ հաւատը՝ հանդէս, սլաքեր, ազգային տարազներ պրիզներով, ժտօճիկներ և այլն և այլն: Այդ բոլորը շատ բնական է և անհրաժեշտ: Սակայն այդ բոլորը չէ, որ պիտի յաւերժացնէ այդ մեծ օրը:

Հայկական կուլտուրայի մեծ տօնը միայուն դարձնելու համար հարկաւոր են այլ միջոցներ: Եւ զբանցից խոշորագոյնը, անշուշտ, գրական ֆօնդն է: Մեծարգոյ Յ. Թումանեանի գեղեցիկ առաջարկը, բնականաբար, բուն համակրանքի արժանացաւ բոլոր այն անձանց կողմից, որ նախանձախնդիր են հայ կուլտուրայի զլիաւոր արգասիքներից մէկի՝ հայ գրականութեան բարգաւաճմանը և բազմատանջ հայ գրողի շարքաջ վիճակի բարելումմանը: Մտքիւ տատակներից հայ հեղինակի փշոտ ուղին, կորզել նրան անձայր կարիքի ձեռքից և գէթ մասամբ տանելու դարձնել նրա դրութիւնը հայ ցաւոտ իրականութեան մէջ՝ կարճ է լինել աւելի վեհ ցանկութիւն: Այդ գերազանցօրէն գեղեցիկ գործը լիովին արժանի է մեծ տօնին: Հայկական կուլտուրայի մեծ յօրելեանի օրը բարելաւել այդ կուլտուրայի խոշորագոյն մշակների դրութիւնը՝ կարճ է լինել աւելի վեհ, աւելի սուրբ գործ:

Հայ գրքի տօնը պէտք է տօնիլ նախ և առաջ գրքով: Պէտք է հրատարակել մի շարք ժողովածուներ, նուիրած այս մեծ տօնին, գրական, գեղարուեստական ժողովածուներ: Հայ բանաստեղծը իւր քնարով, հայ թատերագիրը իւր գրչով, հայ հրապարակախօսը իւր թափով, հայ

նկարիչը իւր ներկերով, հայ երաժիշտը իւր մեղեդիներով միաձայն պէտք է փառաբանեն հայ գիրքը. հայ տպագրական խօսքը: Բոլոր պարբերական հրատարակութիւնները պէտք է տօնեն այդ տօնը և առանձին համարներ նուիրեն այդ նուիրական յօդուհանին: Մանաւանդ մեծ թափով այդ վէճ տօնին պէտք է մասնակից անել հայ մատաղ սերունդը, հայ աշակերտութիւնը: Պարզ է, որ ամեն մի հայ դպրոց պէտք է կազմակերպէ հանդէսներ, երեկոյթներ ամենաճոխ ծրագրով: Սակայն դա չէ գլխաւորը. հայ մանուկի, հայ պատանու ձեռքը պէտք է տալ մնալուն յուշարձան այդ տօնախմբութեանը: Հայ մանուկ-աշակերտ պէտք է այդ օրը ստանայ նուէր՝ մասնաւորապէս այդ օրուանը նուիրուած «Հասկեր»-ի կամ «Աղբիւր»-ի համարը, գեղարուեստօրէն հրատարակած մանկական ընտիր գրքեր: Հայ պատանին պէտք է ստանայ՝ Բաֆֆի կամ Պոօշան, Մատուրեան կամ Շիրվանդադէ, Ահարոնեան կամ Նալբանդեան՝ մի խօսքով հայ ընտիր գրողի ընտիր աշխատութիւնը ընտիր հրատարակութեամբ: Պէտք է հրատարակել Լէօ-ի «Հայկական տպագրութիւն»-ը և մի-մի օրինակ նուիրել մեր դպրոցների բարձր դասարանների սաներին: Պէտք է հրատարակել հայ կուլտուրայի քրտնատանջ մշակների մի ձօխ այլքով:

Հայ գիրքը արժանի է դեռ ևս մեր կեանքում չտեսնուած տօնախմբութեան: Ահադին ծախսեր են հարկուոր. այո, բայց միթէ հայ լրագրութիւնը իւր 400-ամեայ գոյութեամբը արժանի չէ թէկուզ միլիոնաւոր ծախսերի:

ՍԻՄ. ՀԱՄԱԼԵԱՆ

Խարկով.

Սեճ ԳՈՐԾԸ

Շատ չոխտան է ասեթ արիւ իմ կազէթ կըկարդամ: Խորթ է, կէնճ ատենս ուզենայինաւ նէ՛ չէր կրնայի կարդալ ինչ կազէթ, ինչ ալ գիրք: Ո՞ր կարդալն իս, խանութ, դորձ, պարի, պանք, վիկսիլ, գուլխուդ մէջը անքան բան է որ՝ կարդան կերևայ ադտեղը:

Շինար՝ արգիս տարիքս առնելէս էտե, խանութս բանս որդուս սպարիշ արի ու էկայ կրուեցայ քաղաք, կօզաէ՛ ասի, խաղախին կէղերը պատէպատ ինկածներս. արի՛ նէ-արի, չարի նէ—չարի. էզաւնէ—էզաւ, չեղաւնէ, չեղաւ:


Ի՞նչ երկնցունում 32 տարի Քաթանատարին Պոռուքովքա գեղն էի. աս գեղի մէջի ունեցած չունեցածս գրեցի մէկ հատիկ որդուս՝ Իվանուշիս ճակատը, իրեն ալ կարգեցի, մէքամ սոյզատէ շէնքով սէմէյատվայէ աղջիկ առի, պեքիմ գիտիս ալ Մելիքօհանին Գասպարին Սրբուհին, օրհնեցի, Աստուած բարի վայելու՞մս տայ ասի, ու էտեէն ալ աւելցուցի. «աճեցէք և բազմացարուք». ու կինմարդուս առի ու էկայ Նախշուան:

Շատ տարի է ոտք կոխած չէի մեր Նախշուանը. պէտք ալ ունեցած չէի տան. խոթիս Քաթանատարէն կանէի, սըխ սըխ ալ կերթայի: Փաշիոթ պէտք լարնը՝ գիրով էր բանը. մէքաս գիր կըգրէի մեր Զաքիին Սաչատուրին, անկից էտե Իւրուշանին Մինաս ա-ին, վերջի ատեններն ալ Մարգար ա-ին, 2—3 մանէթ ալ տարեկան խարճը, մէկ շաբաթ չէր անցնէր, փաշիոթը կուգար:

Էնճամը քաղաք չեկածս 25 տարի կըլլար: Ես գիտիմ քի կենէ ան հինութ Նախշուանն է. մտանէ չճանչցայ. սաղ քաղաքը քարուածք, ամեն փողոցները՝ օրթայէն մինչև քենարները, էլէքտրիչխութուայ, տուները հապա, վրտէխ ին Պապուկ օղլուին, Զատիկին տուները, անոնց իզն ալ չիկայ թոզն ալ. անոնց տեղը պալապան իրեք էթաժ տուներ, թաժավայ, փողոցներուն մէջը երկու քով ծառեր, սա մեր Նախշուանն է, կասիմ միտքէս, հարցունելու. եալ կամշում: Եկանք գէպի պազար ճըկուեցանք, կնայիմ աղլի պղտիկ Սիմինարին ամպէս պացոցիլ է որ հայ հայ երկինք կը հասնի, կընայիմ իրեքում էթաժ ալ աւելցուցիլ ին: Պապօ հասարակութին, ասի, միտքէս, վերջը իմացայ, որ մեր Հայոց Բարեգործական ընկերութիւնը ու հայի հօգիով Դանիէլ աղան կախեցուցիլ ին ադ վերի էթաժը, հասարակութիւնն ալ հէպէթ որ պակաս մնացած չէ իրեն քապիկներով ու մանէթներով:

Մենք օրինաւոր Նախշուանցի եղանք—անպէս խուճուում իմ որ Պոասքովքայէն էլլածնեւրուս. բոլորովին խաղախ դարձիլ էինք. ժամէ, պատարագէ պաղիլ էինք. հո՞՛ փառք Աստուծոյ, էկածներէս վերի է, հայ եղածներս ալ իմացանք, քրիստոնեայ եղածներս ալ. կիրակի կըլլայ, տօն կըլլայ՝ ժամդ գիտիս, պատարագդ գիտիս:

Նախշուան կրուածէս վերի է կազէթ կը կարդամ ասի: Շինախ առաջուան պէս գործի տէր



1182-66

ցածր ստատիճանի վրայ է մեղանում, միւս կողմից էլ թայֆայական գործելակերպը մեղանում դեռ այնքան զօրեղ է, որ մի բանակի ասածը, որքան էլ տեղին և կարևոր լինի, միւս բանակի կողմից ամենալաւ դէպքում լուռութեան է արժանանում, որ այս դէպքում ոչ թէ կօրրեկտութեան նշան է այլ արհամարհանքի, իսկ մեծ մասամբ խճրճանքի, աղաւաղման ու ծաղրի է ենթարկւում:

Մեր իրականութիւնը ստիպում է ակամայից եզրակացնել, որ ոչ թէ արժանաւորը, պարտաճանաչ, բարեխիղճ ծառայողն է արժանանում գնահատման այլ նա, որի համար աղմուկ են բարձրացնում, որի մասին գրում են օր ու ու գիշեր ամեն ազդի ու դաւանանքի մարդիկ: Իսկ այս օրինակ վարմունքն էլ խնդրի հակառակ ծայրահեղութիւնն է, որ դարձեալ հասարակութեան դատարարակութեան խնդրին վրասում է: Հասարակութիւնն այդպիսով վարժում է միայն կրաւորական դերի՝ նա սպասում է, որ իրեն մի քանի անգամ ասեն, խնդրեն, պահանջեն, նոր միայն գործի դիմէ, և այն էլ այնպիսի գործի, որի ոչ թէ ներքին իմաստի, մեծութեան արժէքն է ըմբռնել, այլ արտաքին շուքը. ով շատ աղմուկ է հանում, ում մասին շատ են խօսում նա է ուշագրաւը դառնում, իսկ թէ սրբան այդ խօսակցութեան առարկայ եղողը իրօք արժէքաւոր է, այդ այնքան էլ հետաքրքիր չէ լինում:

Ասածներին ապացոյց թող լինի մի երկու օրինակ: Մամուլում խօսք բարձրացաւ մեր հասարակական կեանքում իւր ժամանակին կարեւոր աշխատանք կատարող Սպանդար Սպանդարեանի յօրեխանի մասին. վերջերս նրա կրած հոգեկան ու նիւթական զրկանջներից յետոյ նորից մի երկու անգամ խօսք եղաւ այդ աշխատաւորին գնահատելու, վարձատրելու մասին. բայց ինչ արդիւնք ստացուեց. ամիսներ են անցնում և հասարակութիւնը լուռ է. մասնաւոր անհատներ միայն այստեղից, այնտեղից թոյլ արձագանք են տալի: Ասել թէ Սպանդարեանը համակրողներ չունի, ասել թէ նա գործ չէ կատարել, նա մեր կեանքի յառաջադիմութեան խնդրում մաս չունի, խիստ միակողմանութիւն կը լինէր: Բայց այդ գիտակցութիւնը դեռ քիչ է. պէտք է երևի սրոշ տեսակի աղմուկ բարձրացնել գործի յաջողութեան համար. բայց չի լինի. այդ պատուարեր չէ ինքնասէր անձի գնահատութեան տեսակէտից:

Այժմ էլ հրապարակ է հանած մեր նոր բանաստեղծների հօր Յովհաննէս Յովհաննիսեանի 30-ամեայ զրական-ուսուցչական գործունէութիւնը տօնելու յօրեխանը: Բայց ինչ ենք տեսնում—դարձեալ անտարբերութիւն, դարձեալ սառնութիւն: Միթէ որ և մէկը կարող է ժըխտել այդ իդէալիստ բանաստեղծի հասարակական ծառայութիւնը, միթէ կլինի մէկը, որ չխօստովանէ նրա կատարած յարգանքի ու խրախուսանքի արժանի աշխատանքը: Սակայն ինչո՞ւ լուռ ենք, ինչո՞ւ միայն հատուկտոր թղթակցութիւններով ենք գնահատում այդ վաստակաւոր աշխատաւորին: Դարձեալ այն պատճառով—որ պակասում է աղմուկը, պակասում է արդէն ցաւալիօրէն սովորական դարձած ունցնելու, մեծացնելու գնահատման միջոցը:

Թողնենք այդօրինակ գնահատման ձևը, թողնենք զօռով որևէ հասարակական գործչի պատուելու անպատուարեր միջոցը: Թոյլ տանք, որ հասարակութիւնը ինքը գիտակցէ, ինքը ընդառաջ գնայ և ինքը իւր պարտքը կատարէ: Յիշեցնել և ոչ աղմկել, անա ինքնասիրութիւնը չվիրաւորող պատուելու միջոցը:

Ի.

ԻՆՉՊԷՍ ՅՕՆԵԼ

11.

Օրէցօր մօտենում է հայկական կուլտուրայի վէհագոյն տօնը, տպագրութեան 400-ամեակի օրը:

Լրագրական տեղեկութիւնները ամեն օր գալիս են մեզ աւետելու, որ այդ նուիրական տօնը պէտք է ըստ արժանւոյն տօնուի հայկական կենտրոններում-կովկասի քաղաքներում:

Բազու, Թիֆլիս և մի շարք այլ քաղաքներ պատրաստում են փառաւորապէս յարգել վէհ յօրեխարին՝ հայ գիրքը:

Այդ ուրախալի լուրերը անգոր են փարատելու իմ կասկածը:

Ես ասել եմ արդէն և պարզ է ամենի համար, որ հայկական կուլտուրայի տօնը պէտք է լինի համազգային տօն բառիս ամենալայն իմաստով:

Ես ասել եմ արդէն՝ ամեն տեղ, ուր կայ թէկուզ մի բուռն հայ, ուր կայ հայաց դպրոց, հայ համայնք—պէտք է տօնուի հայ գրքի յօրեխանը:

Որքան էլ այլասեռուած լինին ուսանայ գաղութները, որչափ էլ հեռու գնացած լինին օտարացման ուղիով, դիցուք, Ղրիմի հայերը — սիրում եմ հաւատալ, որ իւրաքանչիւր հայ գաղութ ունի իր մէջ իսկական հայ ինտելլիգենտների թէկուզ մի փոքրիկ խումբ, որ կարող չէ անտես առնել համահայկական այդ վէհագոյն տօնը:

Քանի տարի է արդէն, որ ցաւ ի սիրտ արձանագրում եմ ուսանայ գաղութների օրէցօր յառաջագրիմող օտարացումը, քանի տարի է, որ ի խորոց սրտի ողբում եմ Ղրիմի հայութեան անչափ հեռու լինելը ազգային-կուլտուրական ինքնագիտակցութիւնից:

Բայց... միթէ՞ վէհ յօրելուարի -- հայ գրքի տօնը անգամ կարող չէ հաշիցնի այդ սառոյցը և, ի մի հաւաքելով լուսոյ երբեմն պսպղացող շողերը, առաջ բերել մի հանուր կուլտուրական ընթացք:

Այն օրից, երբ ես, հայ կեանքը արձանագրող ժուլնալիստի ուշադիր հայեացքըս բեռեցի ուսանայ գաղութների ազգային-կուլտուրական կեանքի վրայ, հայ ազգը տօնեց մի շարք կուլտուրական մեծ տօներ և ձեռնարկեց մի շարք կուլտուրական գործերի:

Էջօի, Ծատուրեանի, Շիրվանզադէի գործունէութեան յօրելեանները, Արովեանի արձանի, դպրոցական-ուսուցչական և գրական Ֆօնդերի հարցը — այդ բոլորը անցաւ ուսանայ գաղութների մեծամասնութեան համար առանց հետաքրքրելու, սառանց գրաւելու, առանց նրա մասնակցութեան:

Ես քանիցս արդէն առիթ ունեցել եմ խորագանել Ղրիմի և առհասարակ կեդրոնական Ռուսաստանի հայութեանը իր այդ ապիկար ընթացքի համար:

Օտարացման ուղին բռնած ուսանայ գաղութների հայութեան հոծ մեծամասնութիւնից, անշուշտ, կարելի չէ պահանջել կարճ ժամանակուայ ընթացքում խտացնել հայկական կուլտուրան և գիտակցօրէն վերաբերուել դէպի կովկասահայերի այս կամ այն կուլտուրական քայլը, մասնակցել այս կամ այն ազգային-կուլտուրական տօնին:

Բայց՝ ամենի մի գաղութ ունի մի բուն իրանց ինտելլիգենտ, հայ ինտելլիգենտ անուանողներ և անհազրանցից մենք իրաւունք ունենք գործ պահանջել:

Մինչև երբ ուսանայ գաղութների կուլտուրական կեանքի գլուխը անցած այդ մտաւորականները պէտք է խուսափեն իրանց վէհ պարտականութիւնները կատարելուց և պէտք է բաւականան լով դպրոցական կամ տէրտէրական դարմադաշներով:

Ղրիմի քաղաքներից իւրաքանչիւրում կան հայ ինտելլիգենտների մեծ կամ փոքր խմբեր, որ սիրում են յաճախ մեծ-մեծ խօսքերով հրապարակ դուրս գալ և... «խօսքեր, հա խօսքեր»...

Այսքան տարի ուշի-ուշով հետևում եմ Ղրիմի հայոց կեանքին և ի՞նչ եմ տեսել երբ քրքրում եմ անցեալը՝ մի-երկու լուսաւոր երևոյթներ խեղդում են անվերջ դարմադաշների, ազեղ ուսուցչական կամ տէրտէրական «ճակատամարտերի» ովկիանում:

Հայ գրողի յօրելեան, հայ ուսուցչին ապահովելու Ֆօնդ, հայ գրողին կարիքի ձիրաններից կորզելու միջոց, հայ գրականութեան նախահօր արձանը — այդ բոլորը անցել է Ղրիմի հայերի մօտից առանց կպչելու իսկ նրան:

* * *

Հայկական կուլտուրայի վէհագոյն տօնը, հայ գրքի յօրելեանը:

Միթէ՞ այդ մեծ տօնը չի կարողանալու ազատուել իր նախորդների վիճակից և ուսանայ գաղութների հոծ մեծամասնութիւնը պէտք է լուելայն անցնի այդ վէհ տօնի վրայով:

Միթէ՞ Ղրիմի հայ ինտելլիգենտները պէտք է դարձեալ կոյր ձեւանան, խուլ ձեւանան:

Չեմ ուղում հաւատալ:

Իհո անցեալ ամառ Ղրիմի ուսն թերթի միջոցով հրաւիրեցի Ղրիմի հայութեան ուշադրութիւնը այդ նուիրական տօնի վրայ:

Մի-երկու ամիս առաջ կրկին յիշեցրի:

Այսօր նորից դիմում եմ Ղրիմի հայաքնակ վայրերի հայ մտաւորականներին, դարձեալ յիշեցնում, որ մօտենում է՝

Հայ գրքի յօրելեանը:

ՍԻՄ. ՀԱՄԱԼԵԱՆ

Խարկով.

